http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2015 թվականի N 107-Ն

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 5 հավելվածի 8-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել երկրորդային հումքի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ, սույն որոշման կիրառության իմաստով, երկրորդային հումք են համարվում «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ արտադրության և սպառման թափոններ համարվող՝ սույն որոշման հավելվածի ցանկում ներառված ապրանքները, այդ թվում՝ արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքը, նյութերը, արգասիքները և այլ արտադրանքի մնացորդներն ու սկզբնական սպառողական հատկությունները կորցրած արտադրանքը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2014 թվականի հոկտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
փետրվարի 12-ի N 107-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ

1. Թղթի և ստվարաթղթի թափոններ
2. Գունավոր ու սև մետաղների ջարդոն և թափոններ
3. Պոլիմերային նյութերի թափոններ
4. Ապակու և ապակյա իրերի ջարդոն ու թափոններ, այդ թվում՝ գործածության մեջ եղած ապակյա տարաներ

5. Տեքստիլ թափոններ
6. Հանքային և սինթետիկ յուղերի թափոններ
7. Ռեսուրսն սպառած էլեկտրական մարտկոցներ
8. Էլեկտրատեխնիկա և էլեկտրոնային սարքավորումների ու դրանց մասերի ջարդոն և թափոններ
9. Շինարարական թափոններ
10. Փայտանյութի թափոններ
11. Ռետինե թափոններ

PROFIKON